



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 24 ՓԵՏՐՈՒՐ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 78

ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՍ ԱՌԱՋՆՈՐԴԵՑ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԻՐԸ

Լսեցէք ինչ որ կ'ուսուցանեմ, ով իմ ժողովուրդս, ականջ դրէք ըսելիքներուս: Օրինակ մը պիտի տամ, մեր անցեալին վերաբերող խորհուրդներ պիտի ներկայացնեմ. բաներ՝ որոնք լսեցինք ու գիտցանք, որոնք մեր հայրերը պատմեցին մեզի: Մենք մեր գաւակներէն պիտի չպահենք, այլ՝ գալիք սերունդներուն պիտի պատմենք Տիրոջ հզօր գործերը՝ օրհներգութեան արժանի, անոր կատարած սքանչելի գործերը: Անիկա իր պատուիրանները տուաւ Յակոբի սերունդներուն, իր Օրէնքը տուաւ Իսրայէլի ժողովուրդին, եւ մեր հայրերուն հրահանգեց՝ իրենց գաւակներուն սորվեցնել զանոնք. որպէսզի գալիք սերունդը եւս, որ դեռ աշխարհ պիտի գայ, գիտնայ՝ եւ ինք իր կարգին պատմէ յաջորդ սերունդին: Որպէսզի նոր սերունդները իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնեն. չմոռնան ինչ որ անիկա ըրաւ, այլ՝ անոր պատուէրները գործադրեն: Անհնազանդ եւ ապստամբ չըլլան իրենց նախահայրերուն նման. այն սերունդին՝ որ Աստուծոյ չվստահեցաւ, եւ Աստուծոյ հաւատարիմ չեղաւ:

ՇԱՐՎԱԿԱՆ

Յոյս իմ ես դու տէր քաւիչ յանցանաց իմոց.

մի անտես առնէր զբրդխումն արտասուաց իմոց. ողորմեա ինձ աստուած:

ԱՂՈԹՔ

Տէր Աստուած գթութեան, դուն որ եկար ո՛չ թէ կորսնցնելու՝ այլ ապրեցնելու մարդոց հոգիները, ներէ՛ քու առատ ողորմութեամբդ, որովհետեւ Դուն միայն երկինքի մէջ աննառելի ես եւ երկրի վրայ ան-գնելի. Դուն, ամէն բանի սկիզբն ես, ու ամէն բանի մէջ ամբողջ. օրհնեալ ես բարձունքներուն մէջ, եւ Քեզի կը վայելէ փառք յաւիտեանս: Ամէն:

ՇԱՐՎԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԿԱՆ-ԱՂՈՅՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Սմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցերոյ արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ՕՐՈՒԿՆ ՆԻԹԸ



ՍԱՂՄՈՍ 78

ՄԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՆԵՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ 78:1-8

Նախորդ, 77-րդ Սաղմոսը նեղութեան մէջ միսիթարութիւն գրնելու մասին էր, որ Ասաֆ իբրեւ աղօթք եւ օրինակ ներկայացուց: Նեղութեան մէջ միակ միսիթարութիւնը Աստուծոյ կապարած մեծագործութիւնները յիշելը, անոնց վրայ խորհրդածելն ու խոկալը: Իսկ այսօրուան Սաղմոսը 78-րդ այդ գործերուն թուումը, որ իբրեւ օրինակ եւ իբրեւ առակ կը գործածաւ ու կը ներկայացնէ: Երկարապարում Սաղմոս մըն է, որ պիտի փորձենք բաժին-բաժին կարդալ ու սերտել: Այս Սաղմոսը պարզապէս պարմութեան մը վերաբարդումը չէ որ կ'ընէ, այլ որպէս օրինակ, ցոյց տալու բոլոր ժամանակներու հաւարացեալներու վիճակն ու փորձառութիւնը:

Առաջին համարը ցոյց կու տայ, թէ Աստուծոյ ժողովուրդը ունի պարտականութիւնը լսելու ինչ որ Աստուծոյ Իր պարտաւորաններով պիտի ուսուցանէ: Նաեւ կը յիշեցնէ, որ պարզապէս լսողներ չըլլան, այլ՝ ականջ դնող, այսինքն՝ լռութեամբ մտիկ ընող եւ միտք դնող: Ժողովրդային բացատրութեամբ, մէկ ականջէն մտնող եւ միւս ականջէն ելող չըլլան այդ խօսքերը: Ռոտվիտերեւ այդ խօսքերը պէտք է որ փոխանցուին սերունդէ սերունդ: Օրինակ մըն է որ պիտի տայ, օրինակ մը, որ իր իսկ ժողովուրդին պարմութիւնն է, սակայն այդ օրինակ պարմութիւնը խորհուրդ ունի իր մէջ: Այնպէս ինչպէս Քրիստոսի ուսուցումները, որոնք առակներով էին, սակայն այդ առակներուն մէջ կային Աստուծոյ արքայութեան խորհուրդները: Կան այնպէս ինչպէս պիտի ըսէ Պօղոս Առաքեալ. «Անցեալի եղած դէպքերը իբրեւ օրինակ»: Բաներ, որոնք լսել են իրենց հայրերէն, որովհետեւ այդպէս էր նաեւ պարտելը Աստուծոյ փրկած Իր ժողովուրդին, այս եղածները պարմեցէք գալիք սերունդներուն: Իսկ գալիք սերունդները իրենք իրենց կարգին պարմելու գալիք սերունդներուն: Հետեւաբար, սերունդէ սերունդ փոխանցելու պայմանով: Յաճախ կրնանք լսել, մտիկ ընել, բայց միայն մեզի պահել, առանց փոխանցելու գալիք սերունդին: Բայց տեսէք պայմանը, «Մենք մեր գաւակներէն պիտի չպահենք, այլ՝ գալիք սերունդներուն պիտի պարմենք», ինչքան պիտի պարմեն, «Տիրոջ հօր գործերը, որոնք օրինակութեան արժանի են»: Ահա թէ ինչու առաջին համարը կը թելադրէ որ ուշադրութեամբ լսեն ու մտիկ ընեն, որովհետեւ խորհուրդ կայ փոխանցուելիք: այն ինչ որ այսօր կը պակսի մեր իրականութեան մէջ: Այսօր երեխաները ուր է որ կը սորվին Աստուծոյ ճշմարտութիւններուն մասին: Այսօր ունինք շաբաթօրեայ կամ կիրակնօրեայ դպրոցներ, եւ կարծէք ծնողներ գերծ մնան այս պարտականութենէն, բայց Հին Կրակարանի պարմութիւնը մեզ ինչ կը յիշեցնէ Մովսէսի կեանքէն, երբ առաջին քանի մը ամիսները մայրը զինք սնուցեց: Միթէ ի՞նչ ըրաւ, միայն կաթ, ընդհակառակը կաթին հետ միասին, անոր ականջին խօսեցաւ, պարմեց, երգեց, աղօթեց, եւ ահա քառասուն տարիներ յետոյ, Մովսէս Փառաւորնի պալատին մէջ իր ինքնութիւնը յայտնեց որպէս Իսրայէլացի: Չինանք այդ թակարդը, ուր յաճախ կը խուսաբինք, պարճառա-բանելով թէ երեխան ինք թող մեծնայ եւ ինք որոշէ ինչ բանի կ'ուզէ հետեւի, մանաւանդ երբ հարցը կը վերաբերի հոգեւոր դաս-փիլիսոփայութեան, ճշմարիտ Աստուծոյ պարմութեան: Ասոր լաւագոյն օրինակը Պօղոս Առաքեալ երբ կը յիշէ իր գործընկեր Տիմոթէոսը, երբ կ'ըսէ. «Մանուկ հասակէդ գիտես», նաեւ յիշելով թէ որոնցմէ սորվեցար, մօրմէդ ու մեծ մօրմէդ:

Ահա Աստուծոյ իր պարտաւորաններն ու Օրէնքները փրկաւ Յակոբի սերունդներուն, ինչո՞ւ. իրենց գաւակներուն սորվեցնելու համար, իսկ սերունդները գալիք յաջորդ սերունդներուն: Ինչո՞ւ, որպէսզի իրենց յոյսը Աստուծոյ վրայ դնեն: Այսօր մենք մեր յոյսը ինչ բանի վրայ դրած ենք: Առաւել եւս, անհնազանդ ու ապստամբ չըլլալու եւ Աստուծոյ անհաւարարիմ չըլլալու համար, այնպէս ինչպէս որ եղան: Ուրեմն Աստուծոյ պարտաւորանները, ու մանաւանդ՝ անոնց գործադրութիւնը մեզ հեռու կը պահէ անհնազանդութենէ, Աստուծոյ դէմ ապստամբելէ եւ անհաւարարիմ ըլլալէ:

Պ*ահապան ամենայնի Քրիստոս,
աջ թո՛ւ հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ թո՛ւ արարածոց եւ ինձ բազմամեղիս:*